ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ Արարատ համայնքի բնակիչներ,

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա կապակցությամբ: Այսօր յուրաքանչյուրիս տոնն է, քանի որ մեր երկրի Մայր օրենքն է արտահայտում մեր ընտրած ուղու՝ ժողովրդավար, սոցիալական ու իրավական պետություն լինելու որոշումը: Մեր պետական, քաղաքական, հասարակական, սոցիալական կյանքը կարգավորող այս հեղինակավոր փաստաթղթի դրույթները բոլորիս համատեղ ջանքերի, մեր աշխատանքի, պետականամետ գործունեության շնորհիվ պետք է դառնան ուղենիշներ: Միայն համատեղ և միասնական ուժերով կյանքի կոչվող բարեփոխումների արդյունքում կարող ենք ունենալ զարգացած պետություն, ուժեղ համայնք և կայացած հասարակություն:

Սիրելի՛ հայրենակիցներ, Արարատ համայնքի բնակիչներ, Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, վարչական ղեկավարների և համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ բոլորիս պետական այս կարևորագույն տոնի առթիվ՝ ցանկանալով խաղաղություն, ամուր պետականություն, անխոցելի Սահմանադրություն և միասնականություն՝ հաղթահարելու մեր պետականության առջև ծառացած բոլոր խնդիրները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ